Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-049-23.09.2021-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՍՆԴԻԿԻ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի գործածության հետ կապված հարաբերությունները, ինչի նպատակը մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությունն է սնդիկի և սնդիկի միացությունների մարդածին արտանետումներից և արտազատումներից:

Հոդված 2. Օրենքի կարգավորման ոլորտը և սահմանափակումները

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի գործածության վրա:

2. Օրենքի գործողությունը չի տարածվում՝

1) լաբորատոր հետազոտություններում կամ որպես էտալոնային ստանդարտ օգտագործվող սնդիկի կամ սնդիկի միացությունների վրա.

2) սնդիկի կամ սնդիկի միացությունների բնական հետքային քանակների վրա, որոնք առկա են հանքաքարերում և այնպիսի արտադրանքներում, ինչպիսիք են ոչ սնդիկային մետաղները, հանքանյութերը, այդ թվում՝ ածուխը կամ այդ նյութերից առաջացող արտադրանքը և ոչ կանխամտածված հետքաքանակները քիմիական արտադրանքում:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **սնդիկ**՝ տարրական սնդիկ (Hg(0), Քիմիական նյութերի վերաբերյալ վերլուծական տեսությունների մշակման ծառայության համապատասխան համարը 7439-97-6):

Սույն օրենքի իմաստով «սնդիկ» հասկացությունը վերաբերում է նաև սնդիկի խառնուրդներին այլ նյութերի հետ, այդ թվում՝ սնդիկի համաձուլվածքներին, որտեղ սնդիկի կոնցենտրացիան առնվազն 95 կշռային տոկոս է կազմում.

2) **սնդիկի միացություններ**՝ ցանկացած նյութ՝ բաղկացած սնդիկի ատոմներից և այլ քիմիական տարրերի մեկ կամ ավելի ատոմներից, որոնք կարելի է բաժանել տարբեր բաղադրիչների միայն քիմիական ռեակցիաների միջոցով:

Սույն օրենքի իմաստով սնդիկի միացություններն են՝ սնդիկի (I) քլորիդը (կալոմել), սնդիկի (II) օքսիդը, սնդիկի (II) սուլֆատը, սնդիկի (II) նիտրատը, կինաբարը և սնդիկի սուլֆիդը.

3) **սնդիկային թափոններ**՝ նյութեր կամ առարկաներ, որոնք՝

ա. բաղկացած են սնդիկից կամ սնդիկի միացություններից, կամ

բ. պարունակում են սնդիկ կամ սնդիկի միացություններ, կամ

գ. աղտոտված են սնդիկով կամ սնդիկի միացություններով.

Այս սահմանումն իր մեջ չի ներառում մակաբացման ու դատարկ ապարները և լցակույտերը, որոնք առաջանում են հանքարդյունահանման ընթացքում (բացառությամբ սնդիկի հիմնական արդյունահանման), եթե դրանք չեն պարունակում սնդիկ և սնդիկի միացություններ այն քանակությամբ, որը գերազանցում է սահմանված այն շեմային արժեքները, որոնք կընդունվեն Կոնվենցիայի Կողմերի համաժողովի կողմից լրացուցիչ հավելվածով:

4) **սնդիկի հավելիչով արտադրանք**՝ արտադրանք կամ արտադրանքի բաղադրիչ, որը պարունակում է սնդիկ կամ սնդիկի միացություն, որն ավելացվել է կանխամտածված.

5) **սնդիկի հիմնական արդյունահանում**՝ արդյունահանում, որի ժամանակ հիմնական արդյունահանվող նյութը սնդիկն է.

6) **սնդիկի գործածություն**՝ ցանկացած գործողություն կամ միջոցառում, որն իրականացվում է սնդիկի արտադրության, օգտագործման, պահման, փաթեթավորման, փոխադրման, իրացման, շրջանառությունից դուրսբերման, վերամշակման ընթացքում.

7) **Կոնվենցիա՝ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիա.**

8) **Կողմ**՝ պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն, որը համաձայնել է, որ Կոնվենցիան իր համար պարտադիր ուժ ունենա, և որի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել.

9) **Լիազոր մարմին՝ «Կառավարության կառուցվածքի** և **գործունեության մասին» օրենքով** Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

ԳԼՈՒԽ 2
ՍՆԴԻԿԻ, ՍՆԴԻԿԻ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆԴԻԿԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՍՆԴԻԿԻ ՀԱՎԵԼԻՉՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Կառավարության լիազորությունները սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում

1. Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետությունից արտահանման և Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկի սահմանումը.

2) Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման կարգի սահմանումը.

3) Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգի սահմանումը.

4) սնդիկով կամ սնդիկի միացություններով աղտոտված վայրերը հայտնաբերելու և դրանք գնահատելու ռազմավարության հաստատումը:

Հոդված 5. Լիազոր մարմնի լիազորությունները սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում

1.Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման և Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգերի մշակումը.

2) Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման մեկանգամյա լիցենզիաներ տրամադրելը և Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման համաձայնություններ տալը.

3) սնդիկով կամ սնդիկի միացություններով աղտոտված վայրերը հայտնաբերելու և դրանք գնահատելու ռազմավարության մշակումը:

Հոդված 6. Սնդիկային թափոնների վերաբերյալ օրենսդրությունը

1. Սնդիկային թափոնների նկատմամբ կիրառվում են «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաների, ինչպես նաև «Թափոնների մասին» օրենքի համապատասխան կարգավորումները:

2. Սնդիկային թափոնները կառավարվում են՝ հաշվի առնելով «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի ղեկավար սկզբունքները և թափոնների գործածության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

Գ Լ Ո Ւ Խ 3

ՍՆԴԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՆԴԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Սնդիկի ուսումնասիրության և արդյունահանման հետ կապված հարաբերությունների կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում սնդիկի՝ որպես օգտակար հանածոյի (բացառությամբ այն դեպքերի, երբ սնդիկը չի հանդիսանում հիմնական արդյունահանվող օգտակար հանածո) ուսումնասիրության և արդյունահանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով:

Հոդված 8. Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանումը

1. Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանումն արգելվում է՝ բացառությամբ՝

1) Կողմ հանդիսացող երկիր արտահանման դեպքերի, եթե ներմուծող Կողմը Լիազոր մարմնին տրամադրել է գրավոր համաձայնություն առ այն, որ սնդիկն օգտագործելու է Կոնվենցիայով ներմուծող Կողմին թույլատրված եղանակով կամ էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով.

2) Կողմ չհանդիսացող երկիր արտահանման դեպքերի, եթե ներմուծող երկիրը տրամադրել է գրավոր համաձայնություն, ինչպես նաև հավաստագիր առ այն, որ ձեռնարկվել են միջոցներ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար, և այդ սնդիկն օգտագործվելու է միայն այն եղանակով, որը Կոնվենցիայով թույլատրված է Կողմ երկրներին, կամ ներմուծվելու է էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծումը

1. Սնդիկի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն թույլատրվում է միայն Լիազոր մարմնի կողմից տրամադրված մեկանգամյա լիցենզիայի առկայության դեպքում:

2. Սնդիկի ներմուծում Հայաստանի Հանրապետություն չի թույլատրվում Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող երկրից, եթե ոչ անդամ Կողմը չի ներկայացնում Լիազոր մարմնին հավաստում առ այն, որ սնդիկը Կոնվենցիայով անթույլատրելի ճանաչված աղբյուրներից՝ սնդիկի հիմնական արդյունահանումից կամ քլոր-ալկալիական արտադրության կայանքների ապամոնտաժումից առաջացած սնդիկ չէ:

Հոդված 10. Սնդիկի հավելիչով արտադրանքի արտադրության արգելքը

1.Հայաստանի Հանրապետությունում արգելվում է սույն մասով նախատեսված սնդիկի հավելիչով արտադրանքի արտադրությունը.

1) Մարտկոցներ, բացառությամբ արծաթացինկային կոճակային մարտկոցների, որոնցում սնդիկի պարունակությունը 2 տոկոսից քիչ է, և օդացինկային կոճակային մարտկոցների, որոնցում սնդիկի պարունակությունը 2 տոկոսից քիչ է.

2) Անջատիչներ և ռելեներ, բացառությամբ բարձր ճշտության կոնդենսատորային կամրջակների և կորստի չափման կամրջակների և բարձր ռադիոհաճախականության անջատիչների և հսկիչ սարքերի ու կարգավորիչների ռելեների, որոնցում սնդիկի առավելագույն պարունակությունը 20 մգ է մեկ կամրջակի, անջատիչի կամ ռելեի հաշվով.

3) Փոքր չափի լյումինեսցենտային լամպեր ընդհանուր լուսավորության համար 30 վատտ կամ պակաս հզորությամբ, որոնցում սնդիկի պարունակությունը գերազանցում է 5 մգ-ը՝ լամպի մեկ այրիչի հաշվով.

4) Խողովակաձև լյումինեսցենտային լամպեր ընդհանուր լուսավորության համար.

ա. մինչև 60 վատտ հզորությամբ եռագույն լյումինոֆորով և լամպում 5 մգ-ից բարձր սնդիկի պարունակությամբ,

բ. հալոֆոսֆատային լյումինոֆորով, 40 վատտ կամ պակաս հզորությամբ և լամպում 10 մգ-ից ավելի սնդիկի պարունակությամբ.

5) Բարձր ճնշման սնդիկային լամպեր ընդհանուր լուսավորության համար.

6) Սառը կաթոդային լյումինեսցենտային լամպեր և արտաքին էլեկտրոդով լյումինեսցենտային լամպեր էլեկտրոնային դիսպլեյների համար.

ա. կարճ (մինչև 500 միլիմետր ներառյալ), որում սնդիկի պարունակությունը գերազանցում է 3,5 մգ-ը՝ մեկ լամպի հաշվով,

բ. միջին (500 միլիմետրից ավել մինչև 1 500 միլիմետր ներառյալ), որում սնդիկի պարունակությունը գերազանցում է 5 մգ-ը՝ մեկ լամպի հաշվով,

գ. երկար (1 500 միլիմետրից ավել), որում սնդիկի պարունակությունը գերազանցում է 13 մգ-ը՝ մեկ լամպի հաշվով.

7) Կոսմետիկ միջոցներ, որոնցում սնդիկի պարունակությունը 1 մաս/միլիոնից ավելի է, այդ թվում՝ մաշկը գունաբացող օճառներ և քսուքներ՝ բացառությամբ աչքի շրջանի այն կոսմետիկ միջոցների, որտեղ սնդիկն օգտագործվում է որպես կոնսերվանտ, և որի համար առկա չեն արդյունավետ և անվտանգ կոնսերվանտ-փոխարինիչներ.

8) Պեստիցիդներ, բիոցիդներ և տեղային հակասեպտիկներ.

9) Ոչ էլեկտրոնային հետևյալ չափիչ սարքավորումները՝

- բարոմետրեր,
- հիգրոմետրեր,
- մանոմետրեր,
- ջերմաչափեր,
- սֆիգմոմանոմետրեր:

2. Արգելվում է հավաքովի արտադրանքում սնդիկի հավելիչով այնպիսի բաղադրիչների ներառումը, որոնց արտադրությունը արգելված է սույն հոդվածով:

3. Սույն հոդվածը չի տարածվում՝

1) քաղաքացիական պաշտպանության և ռազմական օգտագործման համար անհրաժեշտ արտադրանքի վրա,

2) հետազոտությունների, սարքերի չափաբերման համար, որպես չափանմուշ օգտագործվող արտադրանքի վրա,

3) փոխարինման համար սնդիկ չպարունակող ընդունելի այլընտրանքների բացակայության դեպքում՝ անջատիչների և ռելեների, էլեկտրոնային դիսպլեյների համար սառը կատոդային լյումինեսցենտային լամպերի և արտաքին էլեկտրոդով լյումինեսցենտային լամպերի, չափիչ սարքավորումների վրա,

4) թիոմերսալը որպես կոնսերվանտ պարունակող պատվաստանյութերի վրա:

Հոդված 11. Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց իրավունքները և պարտականությունները

1. Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք իրավունք ունեն սույն օրենքին և Կառավարության սահմանած կարգին համապատասխան Հայաստանի Հանրապետություն ներմուծել և Հայաստանի Հանրապետությունից արտահանել սնդիկ:

2. Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետություն սնդիկ ներմուծելիս և Հայաստանի Հանրապետությունից սնդիկ արտահանելիս պահպանել սույն օրենքով սահմանված սահմանափակումները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

ԳԼՈՒԽ 4
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հոդված 12. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ցանկը հաստատվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:
3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՍՆԴԻԿԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան եւ նպատակը

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի գործածության հետ կապված հարաբերությունները, ինչի նպատակը մարդու առողջության եւ շրջակա միջավայրի պահպանությունն է սնդիկի եւ սնդիկի միացությունների մարդածին արտանետումներից եւ արտազատումներից:

Հոդված 2. Օրենքի կարգավորման ոլորտը եւ սահմանափակումները

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի գործածության վրա:

2. Օրենքի գործողությունը չի տարածվում՝

1) լաբորատոր հետազոտություններում կամ որպես էտալոնային ստանդարտ օգտագործվող սնդիկի կամ սնդիկի միացությունների վրա.

2) սնդիկի կամ սնդիկի միացությունների բնական հետքային քանակների վրա, որոնք առկա են հանքաքարերում եւ այնպիսի արտադրանքներում, ինչպիսիք են ոչ սնդիկային մետաղները, հանքանյութերը, այդ թվում՝ ածուխը կամ այդ նյութերից առաջացող արտադրանքը եւ ոչ կանխամտածված հետքաքանակները քիմիական արտադրանքում:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) **սնդիկ**՝ տարրական սնդիկ (Hg(0), Քիմիական նյութերի վերաբերյալ վերլուծական տեսությունների մշակման ծառայության համապատասխան համարը 7439-97-6):

Սույն օրենքի իմաստով «սնդիկ» հասկացությունը վերաբերում է նաեւ սնդիկի խառնուրդներին այլ նյութերի հետ, այդ թվում՝ սնդիկի համաձուլվածքներին, որտեղ սնդիկի կոնցենտրացիան առնվազն 95 կշռային տոկոս է կազմում.

2) **սնդիկի միացություններ**՝ ցանկացած նյութ՝ բաղկացած սնդիկի ատոմներից եւ այլ քիմիական տարրերի մեկ կամ ավել ատոմներից, որոնք կարելի է բաժանել տարբեր բաղադրիչների միայն քիմիական ռեակցիաների միջոցով:

Սույն օրենքի իմաստով սնդիկի միացություններն են՝ սնդիկի (I) քլորիդը (կալոմել), սնդիկի (II) օքսիդը, սնդիկի (II) սուլֆատը, սնդիկի (II) նիտրատը, կինաբարը եւ սնդիկի սուլֆիդը.

3) **սնդիկային թափոններ**՝ նյութեր կամ առարկաներ, որոնք.

ա. բաղկացած են սնդիկից կամ սնդիկի միացություններից կամ

բ. պարունակում են սնդիկ կամ սնդիկի միացություններ կամ

գ. աղտոտված են սնդիկով կամ սնդիկի միացություններով.

Այս սահմանումն իր մեջ չի ներառում մակաբացման ու դատարկ ապարները եւ լցակույտերը, որոնք առաջանում են հանքարդյունահանման ընթացքում (բացառությամբ սնդիկի ~~առաջնային~~ հիմնական արդյունահանման), եթե դրանք չեն պարունակում սնդիկ եւ ~~սնդիկային~~ սնդիկի միացություններ այն քանակությամբ, որը գերազանցում է սահմանված այն շեմային արժեքները, որոնք կընդունվեն Կոնվենցիայի Կողմերի համաժողովի կողմից լրացուցիչ հավելվածով~~որը գերազանցում է Կոնվենցիայի Կողմերի համաժողովի կողմից սահմանված շեմային արժեքները~~:

4) **սնդիկի հավելիչով արտադրանք**՝ արտադրանք կամ արտադրանքի բաղադրիչ, որը պարունակում է սնդիկ կամ սնդիկի միացություն, որն ավելացվել է կանխամտածված.

5) **սնդիկի ~~առաջնային~~ հիմնական արդյունահանում**՝ արդյունահանում, որի ժամանակ հիմնական արդյունահանվող նյութը սնդիկն է.

6) **սնդիկի գործածություն**՝ ցանկացած գործողություն կամ միջոցառում, որն իրականացվում է սնդիկի արտադրության, օգտագործման, պահման, փաթեթավորման, փոխադրման, իրացման, շրջանառությունից դուրսբերման, վերամշակման ընթացքում.

7~~6~~) **Կոնվենցիա**՝ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիա.

8~~7~~) Կողմ՝ պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն, որը համաձայնել է, որ ~~սույն~~ Կոնվենցիան իր համար պարտադիր ուժ ունենա եւ որի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել.

9~~8~~) **Լիազոր մարմին**՝ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքով Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող եւ օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի եւ թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

ԳԼՈՒԽ 2

ՍՆԴԻԿԻ, ՍՆԴԻԿԻ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆԴԻԿԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՍՆԴԻԿԻ ՀԱՎԵԼԻՉՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

~~ՍՆԴԻԿԻ, ՍՆԴԻԿԻ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՆԴԻԿԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԱՆՎԱՆԳ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ~~

Հոդված 4. Կառավարության լիազորությունները սնդիկի , սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում

1. Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետությունից արտահանման եւ Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկի սահմանումը:

2) Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման կարգի սահմանումը.

3) Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգի սահմանումը.

4) սնդիկով կամ սնդիկի միացություններով աղտոտված վայրերը հայտնաբերելու եւ դրանք գնահատելու ռազմավարության հաստատումը:

Հոդված 5. Լիազոր մարմնի լիազորությունները սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում

1. Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման եւ Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգերի մշակումը.

2) Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման մեկանգամյա լիցենզիաներ տրամադրելը եւ Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման համաձայնություններ տալը ~~եւ ստանալը~~.

3) սնդիկով կամ սնդիկի միացություններով աղտոտված վայրերը հայտնաբերելու եւ դրանք գնահատելու ռազմավարության մշակումը:

Հոդված 6. Սնդիկային թափոնների ~~կառավարումը~~ վերաբերյալ օրենսդրությունը

1. Սնդիկային թափոնների նկատմամբ կիրառվում են «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի եւ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաների, ինչպես նաեւ «Թափոնների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի համապատասխան կարգավորումները:

2. Սնդիկային թափոնները կառավարվում են՝ հաշվի առնելով «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի ղեկավար սկզբունքները եւ թափոնների գործածության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

ԳԼՈՒԽ 3

ՍՆԴԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՆԴԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Սնդիկի ուսումնասիրության եւ արդյունահանման ~~արգելքը~~ հետ կապված հարաբերությունների կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում սնդիկի՝ որպես օգտակար հանածոյի (բացառությամբ այն դեպքերի, երբ սնդիկը չի հանդիսանում հիմնական արդյունահանվող օգտակար հանածո) ուսումնասիրության եւ արդյունահանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով:

Հոդված 8. Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանումը

1. Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանումն արգելվում է՝ բացառությամբ՝

1) Կողմ հանդիսացող երկիր արտահանման դեպքերի, եթե ներմուծող Կողմը Լիազոր մարմնին տրամադրել է գրավոր համաձայնություն առ այն, որ սնդիկն օգտագործելու է Կոնվենցիայով ներմուծող Կողմին թույլատրված եղանակով կամ էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով:

2) Կողմ չհանդիսացող երկիր արտահանման դեպքերի, եթե ներմուծող երկիրը տրամադրել է գրավոր համաձայնություն, ինչպես նաեւ հավաստագիր առ այն, որ ձեռնարկվել է միջոցներ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար եւ այդ սնդիկն օգտագործվելու է միայն այն եղանակով, որը Կոնվենցիայով թույլատրված է Կողմ երկրներին կամ ներմուծվելու է էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծումը

1. Սնդիկի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն թույլատրվում է միայն Լիազոր մարմնի կողմից տրամադրված մեկանգամյա լիցենզիայի առկայության դեպքում:

2. Սնդիկի ներմուծում Հայաստանի Հանրապետություն չի թույլատրվում Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող երկրից, եթե ոչ անդամ Կողմը չի ներկայացնում Լիազոր մարմնին հավաստում առ այն, որ սնդիկը Կոնվենցիայով անթույլատրելի ճանաչված աղբյուրներից՝ սնդիկի ~~առաջնային~~ հիմնական արդյունահանումից կամ քլոր-ալկալիական արտադրության կայանքների ապամոնտաժումից առաջացած սնդիկ չէ:

Հոդված 10. Սնդիկի հավելիչով արտադրանքի արտադրության արգելքը

1. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է սույն ~~մասի առյուսակով~~ մասով նախատեսված սնդիկի հավելիչով արտադրանքի արտադրությունը.

~~Սնդիկի հավելիչով արտադրանքի նկարագիրը~~
1) Մարտկոցներ, բացառությամբ արծաթացինկային կոճակային մարտկոցների, որոնցում սնդիկի պարունակությունը 2 տոկոսից քիչ է, եւ օդացինկային կոճակային մարտկոցների, որոնցում սնդիկի

պարունակությունը 2 տոկոսից քիչ է

2) Անջատիչներ եւ ռելեներ, բացառությամբ բարձր ճշտության կոնդենսատորային կամրջակների եւ կորստի չափման կամրջակների եւ բարձր ռադիոհաճախականության անջատիչների եւ հսկիչ սարքերի ու կարգավորիչների ռելեների, որոնցում սնդիկի առավելագույն պարունակությունը 20 մգ է մեկ կամրջակի, անջատիչի կամ ռելեի հաշվով

~~-~~3) Փոքր չափի լյումինեսցենտային լամպեր ընդհանուր լուսավորության համար 30 վատտ կամ պակաս հզորությամբ~~-~~, որոնցում սնդիկի պարունակությունը գերազանցում է 5 մգ-ը՝ լամպի մեկ այրիչի հաշվով.~~եւ լամպի անոթում 5 մգ-ից բարձր սնդիկի պարունակությամբ,~~

4)~~-~~ Խողովակաձեւ լյումինեսցենտային լամպեր ընդհանուր լուսավորության համար.

ա. մինչեւ 60 վատտ հզորությամբ եռագույն լյումինոֆորով եւ լամպում 5 մգ-ից բարձր սնդիկի պարունակությամբ.

բ. հալոֆոսֆատային լյումինոֆորով, 40 վատտ կամ պակաս հզորությամբ և լամպում 10 մգ-ից ավելի սնդիկի պարունակությամբ.~~մինչեւ 40 վատտ հզորությամբ հալոֆոսֆատային լյումինոֆորով եւ լամպում 10 մգ-ից բարձր սնդիկի պարունակությամբ,~~

5)~~-~~ Բարձր ճնշման սնդիկային լամպեր ընդհանուր լուսավորության համար,

6)~~-~~ Սառը կաթոդային լյումինեսցենտային լամպեր եւ արտաքին էլեկտրոդով լյումինեսցենտային լամպեր էլեկտրոնային դիսփլեյների համար.

ա. կարճ (մինչեւ 500 միլիմետր ներառյալ), որում սնդիկի պարունակությունը գերազանցում է 3,5 մգ-ը՝ մեկ լամպի հաշվով.

բ. միջին (500 միլիմետրից ավել մինչեւ 1 500 միլիմետր ներառյալ), որում սնդիկի պարունակությունը գերազանցում է 5 մգ-ը՝ մեկ լամպի հաշվով,

գ. երկար (1 500 միլիմետրից ավել), որում սնդիկի պարունակությունը գերազանցում է 13 մգ-ը՝ մեկ լամպի հաշվով

7)Կոսմետիկ միջոցներ, որոնցում սնդիկի պարունակությունը 1 մաս/միլիոնից ավելի է, այդ թվում՝ մաշկը գունաբացող օճառներ եւ քսուքներ՝ բացառությամբ աչքի շրջանի այն կոսմետիկ միջոցների, որտեղ սնդիկն օգտագործվում է որպես կոնսերվանտ եւ որի համար առկա չեն արդյունավետ եւ անվտանգ կոնսերվանտ-փոխարինիչներ

8)Պեստիցիդներ, բիոցիդներ եւ տեղային հակասեպտիկներ

9)Ոչ էլեկտրոնային հետեւյալ չափիչ սարքավորումները՝

- բարոմետրեր,
- հիգրոմետրեր,
- մանոմետրեր,
- ջերմաչափեր,
- սֆիգմոմանոմետրեր:

2. Արգելվում է հավաքովի արտադրանքում սնդիկի հավելիչով այնպիսի բաղադրիչների ներառումը, որոնց արտադրությունը արգելված է սույն հոդվածով:

3. Սույն հոդվածը չի տարածվում՝

1) քաղաքացիական պաշտպանության եւ ռազմական օգտագործման համար անհրաժեշտ արտադրանքի,

2) հետազոտությունների, սարքերի չափաբերման համար, որպես չափանմուշ օգտագործվող արտադրանքի,

3) փոխարինման համար սնդիկ չպարունակող ընդունելի այլընտրանքների բացակայության դեպքում՝ անջատիչների եւ ռելեների, էլեկտրոնային դիսպլեյների համար սառը կատոդային լյումինեսցենտային լամպերի եւ արտաքին էլեկտրոդով լյումինեսցենտային լամպերի, չափիչ սարքավորումների,

4) թիոմերսալը որպես կոնսերվանտ պարունակող պատվաստանյութերի վրա:

~~ԳԼՈՒԽ 4~~

~~ՍՆԴԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ~~

Հոդված 11. Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց իրավունքները եւ պարտականությունները

1. Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերը եւ իրավաբանական անձինք իրավունք ունեն՝

~~1)~~ սույն օրենքին եւ Կառավարության սահմանած կարգին համապատասխան Հայաստանի Հանրապետություն ներմուծել եւ Հայաստանի Հանրապետությունից արտահանել սնդիկ:

2. Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերը եւ իրավաբանական անձինք պարտավոր են՝

~~1)~~ Հայաստանի Հանրապետություն սնդիկ ներմուծելիս եւ Հայաստանի Հանրապետությունից սնդիկ արտահանելիս պահպանել սույն օրենքով սահմանված սահմանափակումները եւ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

ԳԼՈՒԽ 4

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հոդված 12. Եզրափակիչ մաս ~~եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ցանկը հաստատվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆԴԻԿԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-049-23.09.2021-ՏՏԳՇ-011/1 ԵՎ *Կ-049[1]-23.09.2021-ՏՏԳՇ-011/1*)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 3-րդ և 9-րդ հոդվածներ**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի չհամարակալված պարբերության մեջ կիրառվում է «սնդիկի առաջնային արդյունահանում» ձեւակերպումը, իսկ Նախագծի 7-րդ հոդվածում կիրառվում է «սնդիկի հիմնական արդյունահանում» ձեւակերպումը: Առաջարկում ենք Նախագծում միևնույն միտքն արտահայտելիս կիրառել որոշակի հերթականությամբ միևնույն բառերը:	**Ընդունվել է:** Նախագծի հոդված 3-ի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերում, ինչպես նաև 9-րդ հոդվածի 2-րդ մասում «առաջնային» բառը փոխարինվել է «հիմնական» բառով, իսկ հոդված 3-ի 1-ին մասի 3-րդ կետի 5-րդ պարբերությունում «սնդիկային» բառը փոխարինվել է «սնդիկի» բառով:	**Ընդունվել է**
2.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում առաջարկում ենք հանել «սույն» բառը՝ հիմք ընդունելով այն հագամանքը, որ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանված է Կոնվենցիա հասկացությունը, այն է՝ «Կոնվենցիա՝ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիա» և հասկանալի չէ «սույն Կոնվենցիա» արտահայտությունը:	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «կողմ՝» հասկացությունը ներկայացվել է 8-րդ կետի տեսքով և «սույն» բառը	**Ընդունվել է**

				փոխարինվել է «, որ» բառով:	
3.	<< Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է «սնդիկային թափոններ» հասկացությունը, այդ կետում մեջբերված կարգավորումներով նախատեսվում են առավել խիստ սահմանափակումներ, քան նախատեսված են Կոնվենցիայով, մասնավորապես. Սնդիկային թափոններ են համարվում այն նյութերը կամ առարկաները, որոնք բաղկացած են սնդիկից կամ սնդիկի միացություններից, կամ պարունակում են սնդիկ կամ սնդիկի միացություններ, կամ աղտոտված են սնդիկով կամ սնդիկի միացություններով՝ անկախ Կոնվենցիայով նախատեսված համապատասխան շեմը (այն քանակով, որը գերազանցում է այն շեմը, որը սահմանել է Կողմերի խորհրդաժողովը՝ համագործակցելով Բազելի կոնվենցիայի համապատասխան մարմինների հետ) գերազանցելու հանգամանքից:	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «որը գերազանցում է Կոնվենցիայի Կողմերի համաժողովի կողմից սահմանված շեմային արժեքները» բառերը փոխարինվել են «որը գերազանցում է սահմանված այն շեմային արժեքները, որոնք կընդունվեն Կոնվենցիայի Կողմերի համաժողովի կողմից լրացուցիչ հավելվածով» բառերով:	**Ընդունվել է**
4.	<< Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ եւ 4-րդ գլուխների վերնագրերում եւ 11-րդ հոդվածում կիրառված է «սնդիկի գործածությունը» հասկացությունը: Մասնավորապես՝ Նախագծի 11-րդ հոդվածում սահմանված են սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց իրավունքները եւ պարտականությունները: Առաջարկում ենք Նախագծում սահմանել «սնդիկի գործածություն» հասկացությունը, որպեսզի որաշակիացվի ո՞ր իրավահարաբերությունների շրջանակում անհատ ձեռնարկատերերը եւ իրավաբանական անձինք ունեն իրավունքներ եւ պարտականություններ, արդյո՞ք սնդիկի	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում լրացվել է «սնդիկի գործածություն» սահմանումը, իսկ 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի համարակալումը խմբագրվել է:	**Ընդունվել է**

			գործածության մեջ ներառվում են սնդիկի ուսումնասիրությունը եւ արդյունահանումը, թե նաեւ սնդիկի արտահանումը եւ ներմուծումը:		
5.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի ԳԼՈՒԽ 2-ի վերնագիր**	Նախագծի 2-րդ գլուխը վերնագրված է «ՍՆԴԻԿԻ, ՍՆԴԻԿԻ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՆԴԻԿԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ»: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 2-րդ գլխում ներառված են նաեւ Կառավարության եւ լիազոր մարմնի լիազորությունների վերաբերյալ հոդվածները: Ուստի, կարծում ենք՝ անհրաժեշտ է Նախագծի 2-րդ գլխի վերնագրում ներառել նաեւ Կառավարության եւ լիազոր մարմնի լիազորությունների վերաբերյալ նշում:	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ գլխի վերնագիրը առաջարկություններին համապատասխան խմբագրվել է:	**Ընդունվել է**
6.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված և 5-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածը վերնագրված է հետեւյալ կերպ՝ «Կառավարության լիազորությունները սնդիկի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում»: Մինչդեռ, հարկ է նկատել, որ Նախագծի 4-րդ հոդվածում Կառավարության լիազորությունները սահմանվում են նաեւ սնդիկի հավելիչով արտադրանքի, ինչպես նաեւ սնդիկի միացությունների նկատմամբ: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 5-րդ հոդվածի վերնագրին եւ 5-րդ հոդվածում ներառված սնդիկի միացությունների վերաբերյալ լիազոր մարմնի լիազորությանը:	**Ընդունվել է:** Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածների վերնագրերը և 1-ին մասերը «սնդիկի» բառից հետո լրացվել են «, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների և սնդիկի հավելիչով արտադրանքի» բառերով:	**Ընդունվել է**
7.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Սնդիկի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում լիազոր մարմնի լիազորություններն են՝ (...) 2) Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման լիցենզիաներ տրամադրելը եւ Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման համաձայնություններ տալը եւ ստանալը.»:	**Ընդունվել է:** Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից «և ստանալը» բառերը հանվել են:	**Ընդունվել է**

			Վերոնշյալ կարգավորմամբ լիազոր մարմնի համար սահմանվում է Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման համաձայնություններ ստանալու լիազորություն: Մինչդեռ հասկանալի չէ ի՞նչ է ենթադրում քննարկվող լիազորությունը, մասնավորապես՝ ումի՞ց կամ ո՞ր մարմնից լիազոր մարմինը կարող է ստանալ Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման համաձայնությունը, այն դեպքում երբ նույն դրույթով լիազոր մարմինը լիազորվում է տալ Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման համաձայնություններ:		
8.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված և 9-րդ հոդված**	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ սնդիկի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն թույլատրվում է միայն Լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի առկայության դեպքում: «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքի 2.1-ին հոդվածի համաձայն՝ արտաքին առեւտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ արտահանելու եւ (կամ) ներմուծելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիազոր մարմնի կողմից տրվում են արտաքին առեւտրային նպատակով ապրանքներ արտահանելու եւ (կամ) ներմուծելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ապրանքներ արտահանելու եւ (կամ) ներմուծելու համար կարող է տրվել մեկանգամյա, գլխավոր կամ բացառիկ լիցենզիա: Առաջարկում ենք հստակեցնել Նախագծի՝ սնդիկի ներմուծման լիցենզիային վերաբերող կարգավորումները:	**Ընդունվել է:** Հաշվի առնելով որ սնդիկը ներառված է ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման 8-րդ հավելվածով հաստատված ցանկում, դրա ներմուծումը երրորդ երկրների հետ առևտրի դեպքում իրականացվում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշմամբ սահմանված մեկանգամյա լիցենզիաների հիման վրա, ուստի հստակության համար Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 9-րդ հոդվածի 1-ին մասը «լիցենզիա» բառից առաջ	**Ընդունվել է**

				լրացվել է «մեկանգամյա» բառով:	
9.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված**	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «Թափոնների մասին» օրենքի անվանման հիշատակումից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	**Ընդունվել է:** Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանվել են;	**Ընդունվել է**
10.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված**	Նախագծի Սնդիկային թափոնների կառավարումը վերտառությամբ 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սնդիկային թափոնների նկատմամբ կիրառվում են «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի եւ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաների, ինչպես նաեւ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան կարգավորումները: Սնդիկային թափոնները կառավարվում են՝ հաշվի առնելով «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի ղեկավար սկզբունքները եւ թափոնների գործածության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները»: Վերոնշյալ կարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետեւյալը. Նախագծի 6-րդ հոդվածը նախատեսում է սնդիկային թափոնների կառավարումը, սակայն քննարկվող հոդվածում նախատեսված է միայն վերաբերելի օրենսդրության վերաբերյալ դրույթներ:	**Ընդունվել է:** Նախագծի 6-րդ հոդվածի վերնագրում «կառավարումը» բառը փոխարինվել է «վերաբերյալ օրենսդրությունը» բառերով:	**Ընդունվել է**
11.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսված է սնդիկի ուսումնասիրության եւ արդյունահանման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենդրության վերաբերյալ դրույթ: Մինչդեռ, Նախագծի 7-րդ հոդվածի վերնագիրը	**Ընդունվել է:** Նախագծի 7-րդ հոդվածի վերնագրում «արգելքը» բառը փոխարինվել է	**Ընդունվել է**

			վերաբերում է սնդիկի ուսումնասիրության եւ արդյունահանման արգելքին: Առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը:	«հետ կապված հարաբերությունների կարգավորումը» բառերով:	
12.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված**	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում՝ ՀՀ-ում սնդիկի հավելիչով արտադրանքի արգելվող արտադրություն է համարվում ընդհանուր լուսավորության համար 30 վատտ կամ պակաս հզորությամբ փոքր չափի լյումինեսցենտային լամպերը, որտեղ սնդիկի պարունակությունը 5 մգ-ից բարձր է լամպի անոթում: Մինչդեռ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայում ընդհանուր լուսավորության համար 30 վատտ կամ պակաս հզորությամբ լամպերում 5 մգ-ից բարձր սնդիկի պարունակությունը չափվում է լամպի մեկ այրիչի հաշվով: Բացի այդ, Նախագծում ՀՀ-ում սնդիկի հավելիչով արտադրանքի արգելվող արտադրություն է համարվում մինչեւ 40 վատտ հզորությամբ հալոֆոսֆատային լյումինոֆորով եւ լամպում 10 մգ-ից բարձր սնդիկի պարունակությամբ խողովակաձեւ լյումինեսցենտային լամպերը ընդհանուր լուսավորության համար: Մինչդեռ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայում հալոֆոսֆատային ֆոսֆորի համար նշված չափանիշը ոչ միայն մինչեւ 40 վատտ է, այլ նաեւ 40 վատտ: Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աղյուսակից մեջբերված հատվածը՝ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:	**Ընդունվել է:** Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 4-րդ կետի «բ» ենթակետը խմբագրվել են, համապատասխանեցվելով Կոնվենցիայի դրույթներին:	**Ընդունվել է**
13.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված աղյուսակում ներառված տվյալները շարադրել կետերի տեսքով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական	**Ընդունվել է:** Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասում	**Ընդունվել է**

			ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	ներառված տվյալները շարադրվել են կետերի տեսքով (ոչ աղյուսակի ձևով), աղյուսակի գլխամասում եղած «սնդիկի հավելիչով արտադրանքի նկարագիրը» բառերը հանվել են, իսկ **«մասի աղյուսակով» բառերը փոխարինվել են «մասով» բառով**	
14.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդված**	Առաջարկում ենք 11-րդ հոդվածի 1-ին մասի համարակալված մեկ կետի համարակալումը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քննարկվող հոդվածի մասը բաղկացած է մեկ կետից, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի»:	**Ընդունվել է:** Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը խմբագրվել են՝ նշված մասերի կետերի համարակալումները հանվել են:	**Ընդունվել է**
15.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 3-րդ գլխի վերնագիր, 11-րդ հոդված և 12-րդ հոդված**	Նախագծի 12-րդ հոդվածը ներառված է Նախագծի Սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց իրավունքները եւ պարտականությունները վերտառությամբ 4-րդ գլխում: Հարկ է նկատել, որ Նախագծի 12-րդ հոդվածում շարադրված է եզրափակիչ մասը եւ անցումային դրույթները: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված կանոնը, ինչպես նաեւ 13-րդ հոդվածի 7-րդ մասը, առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածը նախատեսել առանձին գլխի տեսքով: Միաժամանակ, Նախագծի 4-րդ գլխի եւ 11-րդ հոդվածի վերաբերյալ հարկ ենք	**Ընդունվել է:** Նախագծի 4-րդ գլխի վերնագիրը հանվել է, 11-րդ հոդվածը տեղափոխվել է 3-րդ գլխի ներքո, 3-րդ գլխի վերնագիրը լրացվել է **«***և սնդիկի գործածության մեջ ներգրավված* անհատ ձեռնարկատերերի *և*	**Ընդունվել է**

			համարում նշել, որ նորմատիվ իրավական ակտի գլխում պետք է ներառվի մեկից ավելի համասեռ հոդված:	*իրավաբանական անձանց իրավունքները և պարտականությունները»* բառերով իսկ 12-րդ հոդվածը ներկայացվում է 4-րդ գլխի ներքո:	
16.	ՀՀ Կառավարություն	**«Սնդիկի մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված**	Նախագծի 12-րդ հոդվածի վերնագրում «Եզրափակիչ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «մաս» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասում կիրառվող հասկացությունը:	**Ընդունվել է:** Նախագծի 12-րդ հոդվածի վերնագրում կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է**
17.	ՀՀ Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի վերնագրի հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:	**Ընդունվել է:** «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում «2011 թվականի նոյեմբերի 28-ի» բառերը և թվերը տեղափոխվել են «Հոդված 1.» բառերից հետո:	**Ընդունվել է**
18.	ՀՀ Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Հայստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 8-րդ կետում «տարածքներում» բառից հետո լրացվում է «կամ օրենսգրքի	**Ընդունվել է:** «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ	**Ընդունվել է**

		կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	26-րդ հոդվածով արգելվում է օգտակար հանածոյի արդյունահանումը» բառերով: «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված կարգավորումների համապատասխանությունը միմյանց ապահովելու նպատակով առաջարկում ենք «արդյունահանումը» բառից առաջ լրացնել «ուսումնասիրությունը եւ» բառերով՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասում նշված հասկացությունները: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետում կատարվող լրացմանը:	կատարելու մասին» օրենքի նախագծի և 2-րդ և 3-րդ հոդվածներն «արդյունահանումը» բառից առաջ լրացվել են «ուսումնասիրությունը և» բառերով:	